20 մայիսի 2020թ. ք. Երևան

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 416836/16

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, ուսումնասիրելով 20.05.2020 թվականի թիվ _____ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով թիվ 16857 վարույթը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային մարմնում վարվող անձնական հաշվի քարտի տվյալների <<Գիպկ>> ՓԲԸ-ի /ՀՎՀՀ՝ 06904058/ չկատարված հարկային պարտավորությունները 24.03.2020թ-ի դրությամբ կազմել են 201.937 ՀՀ դրամ գումար, որից 201.334 ՀՀ դրամ գումարն առաջացել է 2020թ-ի փետրվար ամսվա եկամտային հարկի և 2020թ-ի փետրվար ամսվա ԱԱՀ-ի հաշվարկներից:

<<Գիպկ>> ՓԲԸ-ի /ՀՎՀՀ՝ 06904058/ տնօրեն Սերգեյ Գևորգյանի (հասցե՝ ք. Վանաձոր, Օգոստոսի 23 փ. 2) կողմից 2020թ-ի փետրվար ամսվա եկամտային հարկի և 2020թ-ի փետրվար ամսվա ԱԱՀ-ի հաշվարկներից առաջացած 201.334 ՀՀ դրամ գումարը ՀՀ Հարկային օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասով և 78-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի վճարվել, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170^3 հոդվածով:

Պատշաճ ծանուցված լինելով արձանագրության կազմման, գործի քննության վայրի և ժամանակի մասին՝ ակտի հասցեատերը չի ներկայացել: Գործում առկա չէ առարկություն կամ բացատրություն:

Նկարագրված արարքի համար նախատեսված է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170^3 հոդվածով, սակայն ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության ընթացքում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից մինչև 1.5 միլիոն ՀՀ դրամ չկատարված հարկային պարտավորությունների գանձմանն ուղղված գործողությունների չիրականացմամբ պայմանավորված, հիշյալ սահմանաչափը չգերազանցող պարտավորությունների չկատարման մասով կատարված զանցանքները դիտվում են որպես նվազ նշանակություն ունեցող արարքներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 21, 244^2, 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Սերգեյ Գևորգյանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն:
2. Սերգեյ Գևորգյանի վերաբերյալ հարուցված թիվ _____ վարչական վարույթը կարճել:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝
Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այդ պարտավորության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)
Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն հանձնելու օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

Մասնակցեցի գործի քննությանը, որոշման վերաբերյալ առարկություններ չունեմ _____